«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

2 դեկտեմբերի, 2025թ. N 74 - Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ «ՊՐՈԳՐԵՍ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի հոդված 28-ի 1-ին կետը, հոդված 31-ը, «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Կանոնադրության 14.17.25 կետը, Պալատի անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման կարգի 8.7 կետը, ինչպես նաև Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի 04.11.2025թ. N 09 արձանագրությունը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. «Պրոգրես Աուդիտ» ՓԲԸ (ՀԳԳՀ 1 20 0333) 2025թ. հոկտեմբերի 9-ի որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման արդյունքում տալ 3 «երեք» գնահատական և որպես կարգապահական պատասխանատվության միջոց՝ սահմանել 500 000 ՀՀ դրամ տուգանք:

2. Հանձնարարել «Պրոգրես Աուդիտ» ՓԲԸ որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման հաշվետվությամբ արձանագրված խախտումների և թերությունների շտկման գործողությունների և այդ գործողությունների ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված ժամկետում տրամադրել Պալատի գործադիր տնօրինությանը:

3. Հանձնարարել Պալատի գործադիր տնօրինությանը արտաքին գնահատման գլխավոր վերահսկողի մասնակցությամբ իրականացնել արձանագրված խախտումների և թերությունների շտկման մշտադիտարկում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման օրվան հաջորդող տասներորդ աշխատանքային օրվանից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**